խանայս, հարբին, զեղխին, շնան են. և փոխանակ պատուելոյ զԱստուած, առաւել բարկացուցանեն, և մի ևս, զի որովհետև յերկրի իւրում բազում կռոմներ և սպայիս ունի. և սոքա զստորագրեալս իբրև զգերիս ի գործ ածեն. ի շաբաթու զԳ աւուրս պարտին տեարց իւրեանց գործել. և ի մնացեալ աւուրսն ինքեանց, և պիտի երբեմն զի ի շաբաթու Բ և Գ տօնք լինին. և այսպէս ոչ մնայ նոցա և ոչ մի օր ի շաբաթու. ուստի յոյժ անտանելի նեղութիւնս կրէին գիւղականք. վասն այսորիկ եբարց զայն, զի հանգիստ լիցի նոցա. մանաւանդ ոչ ընկալան զայս տէգոէթս, և դեռ ի վիճի կան. վասն այսորիկ և մեք տակաւին տօնեմք. այլ ի բերդն և յայլ շրջակայս արտաքոյ մանաւանդ հանդիսացուցին զտէգոէթն. և ոչ տօնեն. բազում և այլ ինչ կարգադրութիւնս արարեալ է, թէ ի վերայ եկեղեցականաց ուղղափառաց և թէ ռացից... իսկ յաւուրս կիւրակէից կամ տօնից ընդ մեծ պատժովք հրամայէ ոչ բանալ զխանութ ոչ մսավաճառի, ոչ էքմէքճիի ոչ պաքալի և ոչ մեխանայի. նաև ոչ ոք կարէ ելանել ի ճանապարհ, կամ կառօք անցանել ընդ քաղաք մի կամ գեօղ։...

Նուաստ ծառայ Հ. Սիմոն վարդապետ
Կրօնաւոր Մխիթարեան

Ցամի տեառն 1771 Նոյ. 22
[Եղիսաբեթուպոլիս]

ՅԲ.

Ռուս – թրքական պատերազմը, Մեսիլինէի առումը և ուրիշ ընդհարումներ բազմաթիւ մանրամասնութիւններով պատմուած են հետևեալ երեք թուղթերուն մէջ, որոնցմէ առաջին երկուքը տարբեր անձերէ գրուած բայց անստորագիր են։

Ա.

Առ Գերապատիւ Հայրդ իմ Ստեփ. բարեւն. ողջոյն ի Քրիստոս Յիսուս

Իբրև յաջողութեամբ հասաք մեք ի մէքօնս, լուաք ի հիւսիսային ազգէն, և ի հոռոմոց երկրիս. եթէ գնացեալ են հիւսիսային ազգինք նաւուք ի մեսիլինէ. յորում վայրի չինէին տաճիկք քանի մի պատերազմական նաւս. և այրեալ են զնոսա. և զ25 շայխայս գտեալս անդ, բեռնաւոր ելս լի ամենայն բարութեամբ գերեալ են։ Իսկ թուրքն բնակք երկրին ժողովեալ են տալ պատերազմ ընդ նոսա. բայց յաղթահարեալ փախուցեալ են ի բերդն։ Եւ ազգն հիւսիսոյ գնացեալ ի ցամաք անդր, յափշտակեալ են զամենայն թնդանօթս բերդին, գտեալս արտաքոյ. և զամենայն չէնս աւերեալ. և ամենայն թնդանօթից բերդին խիցս արկեալ, դարանեալ են յետս. բայց մի ի նաւուցն հիւսիսայնոյ ի պատերազմիլն կարի իմն յառաջ կոյս ի ցամաք դիմեալ, անկանի ի ցամաք ի վերայ կողացն. և ի ջանալն բազումս այլ նաւուց. և ի տկարանալն ազատել զնա ի ցամաքէն, զամենայն գտեալս ի նաւին, հանին արտաքս. և թողուն զնաւն այնպէս։

Հիւսիսայինքն եկեալք ի նաւ մեր, ասացի, եթէ յետ քանի մի աւուրց, ժամանեմք երթալ ի ռատոս, յորում չինեն թուրք զայլ չորս ևս նաւս, առ ի այրել զնոսա։

Երթալոց են յաւուրս յայսոսիկ և ի սախրզ և յայլ իմն բերդ, առ ի գերել և գերփել և զնոսա։ Ամենայն առմատայն նաւուց հիւսիսայնոյն, և զօրքն ըստ մեծի մասին են ի փարոս կղզին. և ըստ պիտանաւորութեան զան և երթան։

Աստ ի բոլոր առչիփէլակն է պանտերայն մոսկոֆին։ Արժանի ողբոց ինչ պատմեն յոյնք բնակք երկրիս, զոր չհաւատայի, եթէ ականջալուր և ականատես չէի. զի ասեն, թէ գտաւ այս ազգ հիւսիսոյ բարբարոսագոյն իբր զտաճիկ. զի և ի քրիստոնեայս չխնայէ գերել գերփել. զի ըմբռնէ զարս և զկանայս քրիստոսադաւանից, եթէ յունաց և եթէ